Հավելված
Հաստատված է Հայաստանի
Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2021 թվականի
սեպտեմբերի 29-ի N364Լ
որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3

1. Էներգետիկայի բնագավառ.....5

1.1. *Իրավական բարեփոխումներ* 5

1.2. Սակագնային քաղաքականություն 8

1.3. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ.....11

1.4. Վերականգնվող էներգետիկա 14

1.5. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.....16

2. Ջրային ոլորտ.....17

2.1. Սակագնային քաղաքականություն 17

2.2. Ջրամատակարարման գրաֆիկների համաձայնեցում և խմելու ջրի սպառման ծավալների մոնիթորինգ.....18

3. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ.....19

4. Սպառողների շահերի պաշտպանություն.....22

4.1. Սպառողների դիմումների քննարկում.....22

4.2. Սպասարկման որակի ցուցանիշներ 24

5. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը.....26

6. Միջազգային համագործակցություն.....29

7. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովում և 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվ..... 34

8. Հանձնաժողովի 2022 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը 35

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է, որը օրենքներով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կարգավորում է էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառները և ջրային ոլորտը:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորող մարմնի դերն ու նշանակությունը նորովի արժևորվեցին 2015 թվականի Սահմանադրության ընդունմամբ, երբ սահմանադրաիրավական կարգավորումների հիմքում դրվեց միջազգային առաջավոր փորձը՝ ուղղված ինստիտուցիոնալ, քաղաքական, իրավական և ֆինանսական առումով անկախ մասնագիտացված կարգավորող մարմին ձևավորելուն: Նշված փոփոխությունների արդյունքում հանձնաժողովին վերապահվեց ինքնավար մարմնի կարգավիճակ, որը ամրագրվեց նաև գործընթացին հաջորդած «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի փոփոխություններով՝ նախատեսելով անկախ և ինքնավար կարգավորող մարմնի գործունեության ապահովման օրենսդրական երաշխիքները:

Հանձնաժողովը, որպես ինքնավար մարմին, կոչված է հավասարակշռելու հանրային ծառայություններից օգտվող սպառողների և ոլորտի տնտեսվարող անձանց շահերը՝ հիմքում դնելով կարգավորող մարմնի անկախությունը և կառույցի նկատմամբ վստահության բարձրացումը:

Ելնելով նշվածից և հաշվի առնելով հանրության համար կարգավորվող ծառայությունների կենսական նշանակությունը՝ հանձնաժողովն իր 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախանշել է այն հայեցակարգային մոտեցումները, որոնք կապահովեն արդյունավետ և հանրօգուտ կարգավորման քաղաքականության իրականացում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

1) Սակագնային քաղաքականության վարչություն,

2) Իրավաբանական և լիցենզավորման վարչություն,

3) Հեռահաղորդակցության վարչություն,

4) Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն,

5) Գործերի կառավարման վարչություն,

6) Անձնակազմի կառավարման բաժին,

7) Հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,

8) Միջազգային համագործակցության բաժին:

Հանձնաժողովի բնականոն աշխատանքը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն, համակարգում և ապահովում է հանձնաժողովի նախագահը, իսկ հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակում, հանձնաժողովի անդամները և գլխավոր քարտուղարը:

1. Էներգետիկայի բնագավառ

1.1. *Իրավական բարեփոխումներ*

2022 թվականի ընթացքում հանձնաժողովն իր գործունեության ծրագրային ուղղությունների տիրույթում նախանշել է մի շարք իրավական բարեփոխումներ՝ միտված գործող կարգավորումների կատարելագործմանը, իրավական բացերի լրացմանը և կանոնակարգերի լրամշակմանը: Մասնավորապես.

➢ 2021 թվականի ընթացքում նախաձեռնվել և սահմանված կարգով Ազգային Ժողով է ներկայացվել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթը՝ ուղղված հանձնաժողովի աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը, այդ թվում՝ վարչարարության ընթացքում ի հայտ եկած բացերի, անհստակությունների վերացմանը, հանձնաժողովի նիստերի կազմակերպման ու անցկացման մեխանիզմների կատարելագործմանը և այլն: Նշված օրինագծերի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո հանձնաժողովը կնախաձեռնի դրանցից բխող համապատասխան իրավական ակտերի լրամշակման գործընթաց: Նշված գործընթացի շրջանակում, մասնավորապես, կլրամշակվեն՝

1) Հանձնաժողովի նիստեր հրավիրելու և անցկացնելու կարգը՝ սահմանված դեպքերում գրավոր քվեարկությամբ հանձնաժողովի որոշումների ընդունմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամների և շահագրգիռ անձանց տեսաձայնային հեռահաղորդակցության կապի միջոցով մասնակցության հնարավորության ապահովմանն ուղղված ընթացակարգային իրավակարգավորումների ամրագրման մասով,
2) էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգը՝

Հայաստանի Հանրապետության կառավարության կարծիքին ներկայացվող գործարքների տեսակներին առնչվող իրավակարգավորումների մասով,

3) դիմում-բողոքների քննարկման կարգը և այլն:

➢ 2021 թվականին հանձնաժողովի գործուն մասնակցությամբ ընդունվել են «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքները, որոնցով վերականգնվող էներգիա օգտագործող կայաններին նոր ձևավորվող էլեկտրաէներգետիկական շուկայում իրավունք է տրվում էլեկտրաէներգիա վաճառել բացառապես մրցակցային պայմաններով՝ առանց էլեկտրաէներգիայի գնման երաշխիքների տրամադրման և պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի կնքման, ինչպես նաև արտադրել և սպառել էլեկտրաէներգետիկական համակարգի տարբեր հաշվառման կետերում: Բացի այդ, կատարելագործվել են ինքնավար էներգաարտադրողների փոխհոսքերի իրականացման ներկայիս մեխանիզմները՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս արտադրել և սպառել էլեկտրաէներգետիկական համակարգի տարբեր հաշվառման կետերում, ձևավորել խմբեր՝ դրանցում ներառելով բնակիչների և կազմակերպությունների:

Նշված փոփոխություններով նախատեսված նոր մեխանիզմների ներդրման և արդյունավետ իրացման նպատակով հանձնաժողովը համապատասխան փոփոխություններ կնախաձեռնի իր իրավական ակտերում:

➢ Հաշվի առնելով երկրի էլեկտրաէներգետիկական համակարգի առանձնահատկությունները, հենվելով ինչպես միջազգային առաջավոր փորձի, այնպես էլ ներքին շուկայի սպառողների պաշտպանության, արտադրության և սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների ներդրման և այլ հիմնարար սկզբունքների վրա՝ հանձնաժողովի կողմից կշարունակվեն Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելին անցմանն ուղղված իրավակարգավորումների (այդ թվում՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների առևտրային կանոնների, էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների պայմանագրերի նոր օրինակելի ձևերի,

էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման և բաշխման ցանցային կանոնների) կատարելագործման աշխատանքները:

- 2022 թվականին կշարունակվեն նաև հանձնաժողովի այլ ակտերի լրամշակման և կատարելագործման աշխատանքները:

Ազատ շուկայի պայմաններում գործելու փորձի ձեռքբերման և հնարավոր խնդիրների շտկման նպատակով էլեկտրական էներգիայի մեծածախ շուկայի նոր մոդելի փորձնական կիրառման դրական արդյունքներով նախատեսվում է նշված մոդելին ամբողջական անցում՝ էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների համար համապատասխան ֆինանսական պատասխանատվության գործիքների կիրառմամբ:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն կունենա էլեկտրական էներգիայի ազատականացված շուկայի ներդրման ընթացքում առաջացող հնարավոր խնդիրների կարգավորման և միջազգային փորձի հետ օրենսդրական դաշտի ներդաշնակեցման նպատակով էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության աջակցությամբ նախատեսվող «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներին:

Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման աշխատանքները հնարավորություն կստեղծեն միջսահմանային առևտրի ակտիվացման համար, որի շրջանակում էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ համատեղ կշարունակվեն աշխատանքները Վրաստանի համապատասխան մարմինների հետ՝ ըստ անհրաժեշտության քննարկելով Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև էներգետիկ համագործակցության ընդլայմանն ուղղված միջոցառումների իրականացման և համաձայնագրի կնքման հարցը:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն կունենա նաև էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության շրջանակում ջերմամատակարարման և գազամատակարարման ոլորտների կարգավորման, բարեփոխումների իրականացման և միջազգային փորձի հետ օրենսդրական դաշտի ներդաշնակեցման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից

նախատեսվող «Ջերմամատակարարման մասին» և «Գազամատակարարման մասին» նոր օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին:

1.2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված առաջատար փորձի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Մասնավորապես, հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի ընդհանուր առանձնահատկությունները, տվյալ երկրին բնորոշ սահմանափակումները, նաև այդ պահի զարգացման աստիճանը, կիրառվող կարգավորման մեխանիզմները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ծախսերի (cost based) որոշման վրա հիմնված և շուկայական (market based) մեխանիզմների: Հայաստանում էներգետիկայի բնագավառում սակագնային կարգավորումը ներկայումս կառուցված է «cost based» մեխանիզմի վրա, ինչը ենթադրում է սպառողներին մատուցվող ծառայությունների արժեքի (սակագների) որոշում՝ ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը կարգավորման յուրաքանչյուր ցիկլում ամբողջությամբ փոխհատուցելու նպատակով: Սակայն, ներկայումս իրականացվող՝ էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացման գործընթացը նպատակ ունի էլեկտրաէներգետիկական համակարգում աստիճանական անցում ապահովել «cost based» մեխանիզմներից «market based» մեխանիզմների: Ընդ որում, «cost based» մեխանիզմներն իրենց հերթին պարունակում են կարգավորման տարբեր մեթոդներ, ինչպիսիք շահույթի դրույքի սահմանային մակարդակի (rate of return regulation), սահմանային հասույթի մակարդակի (revenue cap regulation) և սահմանային սակագնի մակարդակի (price cup regulation) մեթոդներն են: Հայաստանում կիրառվում են նշված բոլոր մեթոդները՝ կախված ընկերությունների գործունեության առանձնահատկություններից: Բացի նշվածից, «cost based» մեխանիզմների կիրառման ժամանակ ընդունված է ներդնել խթանիչ կարգավորման գործիքակազմ (incentive-based mechanisms)՝ ավելի բարձր արդյունավետության մակարդակ ապահովելու նպատակով:

Նման մոտեցումները լայնորեն կիրառվում են զարգացած տարբեր երկրներում (Իտալիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Հունգարիա, Ռուսաստան և այլն): Նպատակը ընկերությունների ծախսերի մակարդակի միջինացումը և որոշակի պայմաններով ֆիքսումն է կարգավորման ավելի երկար ցիկլի համար՝ այդ միջոցով կարգավորման ընտրված ցիկլի ավարտին ծախսերի մակարդակի ավելի օպտիմալ ցուցանիշների հասնելու նպատակով: Այդպիսի ցուցանիշներ կարող են հանդիսանալ կորուստները, ընթացիկ ծախսերի մակարդակը, կանխատեսվող ներդրումները, հավաքագրումների մակարդակը և այլն: Իսկ ընկերությունների՝ նման օպտիմալացում կատարելու խթանը կարգավորման ընտրված ցիկլի ընթացքում լրացուցիչ եկամուտներ ստանալու հնարավորությունն է, եթե վերջինս հաջողում է այդ թիրախներին հասնել ավելի կարճ ժամանակահատվածում: Խթանիչ սակագնային քաղաքականություն 2016 թվականից սկսած կիրառվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ, որի դրական արդյունքներով պայմանավորված՝ նմանատիպ խթանիչ կարգավորման գործիքակազմ նախատեսվում է կիրառել նաև մյուս ոլորտներում: Մասնավորապես, արդեն իսկ մշակվել և գազամատակարար ընկերության, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով հետաքրքրություն ցուցաբերած անձանց, համապատասխան նախարարությունների հետ քննարկվել և Ազգային Ժողովի քննարկման է ներկայացվել գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման նոր մեթոդիկայի նախագիծը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) շրջանակում, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի առաջարկությամբ նախատեսվում է էլեկտրաէներգետիկական համակարգի պետական մասնակցությամբ լիցենզավորված ընկերությունների համար նույնպես ներդնել խթանիչ կարգավորման գործիքակազմ:

Հանձնաժողովը 2022 թվականի ընթացքում ևս հետևողականություն կդրսևորի իրականացվող սակագնային քաղաքականության կատարելագործման աշխատանքներում:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների,

իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքները:

Ընդ որում, 2022 թվականի փետրվարի 1-ից նախատեսվող էլեկտրական էներգիայի ազատականացված շուկայի ներդրման պայմաններում էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշիռը կազմվելու է ժամային կտրվածքով, և դրանով նախատեսված ցուցանիշների շեղման դեպքում կիրառվելու է համապատասխան պատասխանատվության գործիքակազմ, որն, ըստ էության, նվազագույնի կհասցնի կանխատեսվող մեծություններից փաստացի շեղումները:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, կճշգրտվեն «Էներգետիկայի մասին» օրենքով նախատեսված՝ գնման երաշխիք ունեցող փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները, որոնք ուժի մեջ կմտնեն 2022 թվականի հուլիսի 1-ից: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

2022 թվականին կուսումնասիրվեն և կհաստատվեն երկդրույք սակագնային համակարգում գործող՝ էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում 2022 թվականին կիրականացվեն սակագնային քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես, նախատեսվում է ներկայում գործող՝ էլեկտրական էներգիայի գիշերային և ցերեկային ժամային տիրույթների սակագների հետագա կիրառության նպատակահարմարության, սպառողների համար ամսական հաստատուն սպասարկման վճարների սահմանման ուսումնասիրություն և ռեակտիվ էներգիայի սակագների ներդրում:

1.3. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքները կարևորվում են սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի որոշման, ներդրումների արդյունավետության գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում է նույն ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի շրջանակում 2022 թվականին Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում ներդրումներ կիրականացնեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունները՝ ընդհանուր ավելի քան 48.0 մլրդ դրամ ծավալով:

Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերն ուղղված են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը: «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային

ծրագիրը միտված է հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրությանը և շինարարական աշխատանքների ծավալի գնահատմանը, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավմանը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրն ուղղված է «Սևան-Հրազդան» կասկադի վերականգնմանը՝ հետագա անվտանգ, արդյունավետ և հուսալի շահագործման նպատակով: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրն ուղղված է 220/110/35 կՎ «Լիճք» ենթակայանի վերակառուցմանը և ՍԿԱԴԱ տեղեկատվական/կառավարման համակարգի արդիականացմանը: Ընդ որում, բացի նշված՝ հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերից, Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերի շրջանակում «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը կշարունակի իրականացնել նաև 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ էլեկտրահաղորդման ցանցի կառուցմանն ու վերակառուցմանն ուղղված ծրագրերը:

2022 թվականին հանձնաժողովը կամփոփի վերջիններիս 2021 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, ինչպես նաև կքննարկի «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա փակ բաժնետիրական ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերը:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով: Անհատապես ուսումնասիրվում է սպառողների կողմից սպասարկման որակի ցուցանիշներին (ընդհատումներ, էլեկտրական էներգիայի լարման թույլատրելի սահմաններից շեղումներ) վերաբերող յուրաքանչյուր բողոք, և բարձրացված հարցի լուծման ուղղությամբ հասցեական աշխատանքները ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

Հանձնաժողովն ինչպես նախկինում, այնպես և 2022 թվականին, հետևողական է լինելու իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների արդյունավետության ու թափանցիկության ապահովման հարցում՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա ազդեցության առումով: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով համապատասխան տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես «Գնումների մասին» օրենքով նախատեսված www.procurement.am ինտերնետային կայքում, այնպես և ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում:

Գնումների կարգերի նկատմամբ պահանջների սահմանման, ինչպես նաև հետագա մոնիթորինգի ենթակա հանրային կազմակերպությունների ցանկում ներառված են հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում գործունեություն իրականացնող մասնավոր բաժնեմաս ունեցող այն ընկերությունները, որոնց կողմից իրականացվող գնումների արդյունավետությունը կարող է ազդեցություն ունենալ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա, ինչպես, օրինակ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունները, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը, ինչպես նաև «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունը (հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարվող գնումների մասով):

Նշված ցանկում չեն ներառվել 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող հանրային կազմակերպությունները, քանի որ նրանց կողմից իրականացվող գնումների գործընթացը կարգավորվում է «Գնումների մասին» օրենքով: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման աշխատանքների շրջանակում շուկայի նոր մոդելի ներդրմամբ պայմանավորված որոշ լիցենզավորված անձինք իրենց գործունեությունն իրականացնելու են հանձնաժողովի կողմից չկարգավորվող գներով, հանձնաժողովը կքննարկի հանրային կազմակերպությունների ցանկից նրանց հանելու հարցը:

2022 թվականի ընթացքում հանձնաժողովը կշարունակի իրականացնել հանրային կազմակերպությունների գնումների գործընթացի կազմակերպման մոնիթորինգ՝ ռիսկային գործարքների վերհանման, ընթացակարգերի ընտրության հիմնավորվածության գնահատման, գնման ընթացակարգերի ընդհանուր ծավալում մրցակցային ընթացակարգերի կշռի գնահատման, հրապարակված գնումների պլանով նախատեսված և փաստացի իրականացված գնումների համապատասխանության ստուգման նպատակով:

Նույն ժամանակահատվածում կիրականացվի նաև հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման մոնիթորինգը, գնման գործընթացի կազմակերպման մոնիթորինգը, այդ թվում՝ հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի, ինչպես նաև պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:

Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am):

Հանձնաժողովը, 2022 թվականին համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի և միջազգային կազմակերպությունների հետ, կշարունակի աշխատանքները հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից փաստացի կատարված գնումների արդյունավետության ու թափանցիկության բարձրացման ուղղությամբ՝ կիրառելով նաև արդեն իսկ ներդրված մոնիթորինգի մեխանիզմները:

1.4. Վերականգնվող էներգետիկա

Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության բարձրացմանն ուղղված՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ նոր հզորությունների ստեղծումը և դրան ուղղված համապատասխան իրավական և տնտեսական մեխանիզմների ներդրումը մշտապես գտնվում է կառավարության և հանձնաժողովի

գործունեության առանցքում: Այդ առումով, 2017 թվականից մեկնարկել է փոքր հզրությամբ արևային ֆոտովոլտային կայանների լիցենզավորման գործընթաց՝ ընդհանուր 210 ՄՎտ սահմանաչափի շրջանակում արևային էլեկտրակայաններ կառուցելու համար: Նշված սահմանաչափի շրջանակում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաներ ստացած՝ մինչև 1 ՄՎտ հզորությամբ թվով 12 արևային էլեկտրակայաններ արդեն իսկ գտնվում են շահագործման փուլում, մինչև 5 ՄՎտ հզորությամբ թվով 49 արևային էլեկտրակայաններից շահագործման փուլ են անցել 10 կայան և, նախատեսվում է, որ մինչև 2022 թվականի ավարտը շահագործման փուլ կանցնեն նաև մնացած 39 կայանները: Բացի այդ, ընթացքի մեջ է լրացուցիչ նախատեսված 15 ՄՎտ գումարային հզորության սահմանաչափի շրջանակում համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին մինչև 1 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով լիցենզիաների տրամադրման գործընթացը, և արդեն իսկ տրամադրվել է 600 կՎտ հզորությամբ 1 լիցենզիա:

Արդյունաբերական մասշտաբի արևային էլեկտրակայանների մասով նույնպես իրականացվում են համապատասխան ծրագրեր: Մասնավորապես, 2022 թվականին շահագործման փուլ կանցնի 55 ՄՎտ հզրությամբ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից արդեն իսկ հաստատվել են 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում կազմակերպված մրցույթի արդյունքները՝ հաղթող ճանաչելով «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար») ընկերությանը, որին կտրամադրվի էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա՝ վերջինիս հետ Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցության համաձայնագիրը կնքելու և համապատասխան հայտով դիմելու դեպքում: Նշված ծրագրի շրջանակում 2-րդ փուլով նախատեսվում է ևս 200 ՄՎտ հզորությամբ նոր արևային էլեկտրակայանների կառուցման նպատակով մրցույթի կազմակերպում:

Հաշվի առնելով արևային էլեկտրակայանների կառուցման հարցում ներդրողների մեծ հետաքրքրությունը՝ էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական հնարավորությունների առնչությամբ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված եզրակացության պարագայում, էներգետիկայի բնագավառի ռազմավարության շրջանակում Հայաստանի

Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ կքննարկվի նաև փոքր հզորությամբ արևային էլեկտրակայանների կառուցման նպատակով արտադրության լիցենզիաների տրամադրման նոր սահմանաչափ նախատեսելու հարցը:

Վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առումով տարեցտարի առավել նշանակալի է դառնում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի գործընթացը: Նշված գործընթացը թույլ է տալիս ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողներին՝ էլեկտրական էներգիայի սեփական արտադրության միջոցով բարելավել և համահարթեցնել սպառման ռեժիմները՝ նպաստելով գործարար միջավայրի փոքր և միջին հատվածի էներգատար ճյուղերում ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը:

Ներկայում համակարգին են միացել ավելի քան 5900 ինքնավար էներգաարտադրողներ, որոնց համակարգերի ընդհանուր հզորությունը գերազանցում է 110 ՄՎտ-ն: Միաժամանակ, համապատասխան տեխնիկական պայմաններ են ստացել և փոխհոսքերի նպատակով համակարգին միացման ընթացքում են գտնվում մոտ 410 սպառողներ, որոնց համակարգերի պոտենցիալ հզորությունը կկազմի շուրջ 11 ՄՎտ:

1.5. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար:

Ինչպես յուրաքանչյուր տարի, 2022 թվականի ընթացքում ևս հանձնաժողովն էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերություններից կստանա ֆինանսական հաշվետվություններ և կկատարի համապատասխան վերլուծություններ:

էլեկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական կայունություն և առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 100% վճարումներ ապահովելու նպատակով 2022 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի վերահսկել իր կողմից ներդրված հատուկ հաշվի մեխանիզմի բնականոն աշխատանքը՝ երաշխավորելով արտադրողներին և շուկային ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարումը:

էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

2. Ջրային ոլորտ

2.1. Սակագնային քաղաքականություն

Խմելու ջրի ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս ջրային կոմիտեի, «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրով խմելու ջրի ծառայությունների մատուցումը 2017 թվականի հունվարի 1-ից 15 տարի ժամկետով վերապահվել է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը, որը 2022 թվականին կիրականացնի իր պայմանագրային 6-րդ տարվա պարտավորությունները:

Միաժամանակ, հիմք ընդունելով հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների №3 հավելվածով ամրագրված բազիսային սակագների ճշգրտման մեխանիզմը և հաշվի առնելով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների ճշգրտման վրա ազդող գործոնները՝ 2022 թվականին ևս կճշգրտվեն և կսահմանվեն բաժանորդներին մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների պայմանագրային հերթական տարվա սակագները:

Ընդ որում, հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հարցի շուրջ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատարի մոտ 2021 թվականի հուլիսի 19-ին տեղի ունեցած քննարկման արդյունքները և նպատակ ունենալով 2022 թվականից սկսած վարձակալության պայմանագրի մնացած 10 տարիների ընթացքում չեզոքացնել սակագների տատանումները՝ սպառողների համար ապահովելով հնարավորինս կայուն սակագնային քաղաքականություն և սոցիալապես անապահով ընտանիքների համար հնարավորինս մեղմելով սակագների հնարավոր աճը, հանձնաժողովի, ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչներից ստեղծվել է աշխատանքային խումբ՝ մշակելու առաջարկություններ գործող իրավակարգավորումներում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

2.2. Ջրամատակարարման գրաֆիկների համաձայնեցում և խմելու ջրի սպառման ծավալների մոնիթորինգ

Որպես խմելու ջրի սակագների բարձրացումը զսպող մեխանիզմ՝ հանձնաժողովը, յուրաքանչյուր տարի, սակագների ճշգրտման հայտի շրջանակում, ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացնում է մոնիթորինգ՝ փաստացի մատակարարվող խմելու ջրի չհաշվառվող

ծավալները հայտնաբերելու նպատակով: Նման մոնիթորինգ կիրականացվի նաև 2022 թվականին:

Խմելու ջրի ոլորտի կարգավորվող ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև սեպտեմբերի 1-ը, հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել տվյալ տարվա դեկտեմբերին հրապարակվելիք՝ բաժանորդների հաջորդ տարվա ջրամատակարարման գրաֆիկը և տարեկան առնվազն մեկ անգամ՝ դեկտեմբեր ամսվա ընթացքում, իր պաշտոնական կայքում հրապարակել այն:

Համաձայն խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների 66-րդ և 93-րդ կետերի՝ 2019 թվականի հոկտեմբերի 1-ից «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքում խմելու ջրի մատակարարման նվազագույն տևողությունը կազմում է օրական 6 ժամ, բացառությամբ վարձակալության պայմանագրի համաձայնագրով նախատեսված տարածքների, որտեղ նշված ցուցանիշը կապահովվի 2022 թվականից:

Ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության նկատմամբ հսկողության և ոլորտի գործունեության մասին հանրային իրազեկում ապահովելու նպատակով 2022 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի կարգավորվող ընկերություններից ստացվող հաշվետվությունների (տեղեկատվությունների) վերլուծությունն ու ոլորտի գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշների հրապարակումն իր պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ հանձնաժողովը 2022 թվականի ընթացքում կշարունակի աշխատանքները էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, մրցակցության խթանման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության և ներթափանցելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության 100% բնակավայրերն ապահովված են լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ: Մասնավորապես, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների լարային տեխնոլոգիաների հասանելիությամբ ապահովված է 570 (56.9%) բնակավայր, այդ թվում՝ 513 բնակավայրերում (51.2%) հասանելի են դարձել FTTx լայնաշերտ տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: Ընդ որում, նշված ցուցանիշները նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 10.3%-ով և 9.2%-ով, ինչը կանխատեսվել էր հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության ծրագրով:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մարզերում սպառողների պահանջի աճը ինտերնետի նկատմամբ՝ հանձնաժողովը նախատեսում է շարունակել աշխատանքները, այդ թվում՝ օպերատորների հետ համագործակցության շրջանակում, Հայաստանի Հանրապետության բնակավայրերում ամրակցված (լարային և անլար տեխնոլոգիաների) լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնելու Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի տեխնոլոգիաների ցանցերի փոխադարձ ներթափանցելիության և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցուցանիշները:

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության 100% բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներով: Մասնավորապես, հանձնաժողովի կողմից իրականացված 800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի մրցույթով տրամադրված թույլտվությամբ սահմանված պարտավորությունների կատարման

արդյունքում 105 բնակավայրով ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը և կազմել է 100% (1002 բնակավայր): Ընդ որում, 346 բնակավայրով ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության բնակավայրերում երկու օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը և կազմել 81.8% (820 բնակավայր), որի աճը 2020 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի (474 բնակավայր) նկատմամբ կազմել է 73%: Միևնույն ժամանակ, 21 բնակավայրով ընդլայնվել է Հայաստանի Հանրապետության բնակավայրերում երեք օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը և կազմել 6.4% (64 բնակավայր):

Բացի այդ, ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ընդլայնման վերոնշյալ աշխատանքների արդյունքում նախորդ տարվա համեմատությամբ գրանցվել է էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի մի շարք առանցքային ցուցանիշների՝ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվաքանակի՝ 11.6%, օգտագործված ընդհանուր լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերի՝ 77.2% աճ:

Այս առումով, նկատի ունենալով ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ընդլայնման աշխատանքների շարունակականությունը՝ 2022 թվականի ընթացքում ակնկալվում է FTTx լայնաշերտ տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերի հասանելիության աճ 5-10% միջակայքի սահմաններում, ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվաքանակի աճ՝ 5-10% միջակայքի սահմաններում, ինչպես նաև օգտագործված ընդհանուր լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերի աճ՝ 30-50% միջակայքի սահմաններում:

Ելնելով Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի առկա ձեռքբերումներից և հանրային շարժական կապի 4G տեխնոլոգիայից դեպի 5G տեխնոլոգիայի ցանցերի սահուն անցումն ապահովող նորագույն սերնդի շարժական կապի ցանցերի զարգացման նկատառումներից, հանձնաժողովի նախաձեռնությամբ 800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի 791-801ՄՀց և

832-842ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերն առանձնացվել են՝ առևտրային նպատակով տրամադրելու համար: Բացի այդ, նկատի ունենալով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման միջազգային միտումները, հանձնաժողովի նախաձեռնությամբ 2022 թվականին շարունակվելու են քննարկումները Հայաստանի Հանրապետության շահագրգիռ պետական մարմինների հետ՝ շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ներդրման և դրա համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների տիրույթների, այդ թվում՝ 700ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի ազատականացման հարցերի վերաբերյալ:

Այս կապակցությամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկայի զարգացման միտումները, այդ թվում՝ շուկայի կառուցվածքի հնարավոր փոփոխությունները (կոնսոլիդացումը), հանձնաժողովը ոլորտի իրավասու և շահագրգիռ պատկան այլ մարմինների հետ քննարկելու է նշված տիրույթները մրցութային հիմունքներով տրամադրելու հնարավորություններն ու տարբերակները:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառը հանդիսանում է տնտեսության դինամիկ զարգացող ճյուղ, ուստի հանձնաժողովը նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման համատեքստում մշտապես հետևում է բնագավառի միջազգային զարգացման միտումներին՝ կարգավորման գործընթացն այդ միտումներին առավել համահունչ դարձնելու նպատակով:

4. Սպառողների շահերի պաշտպանություն

4.1. Սպառողների դիմումների քննարկում

Սպառողների շահերի պաշտպանությունը հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղություններից է և կրում է բազմակողմանի բնույթ: Նշված աշխատանքներում իր ծավալով առանձնանում է սպառողների դիմումների քննարկումը:

Հաշվի առնելով մատուցվող հանրային ծառայությունների կենսական նշանակությունը սպառողների համար, վերջիններիս կողմից բարձրացվող հարցերը կրում են մեծածավալ բնույթ (2021 թվականի 1-ին կիսամյակում՝ 600 դիմում): Ավելին,

շատ հաճախ դրանք հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվում ոչ միայն անմիջապես սպառողների կողմից, այլև տարբեր պատկան մարմինների և սպառողների շահերի պաշտպանությամբ հանդես եկող կառույցների միջոցով (Հայաստանի Հանրապետության կառավարություն, Ազգային Ժողովի պատգամավորներ, մարդու իրավունքների պաշտպան, ոլորտային հասարակական կազմակերպություններ):

Այս առումով հանձնաժողովը, մշտապես ուշադրության կենտրոնում պահելով սպառողների դիմումների օպերատիվ արձագանքմանն ուղղված մեխանիզմների կատարելագործումը և, նպատակ ունենալով հանրային իրազեկման մակարդակի բարձրացման միջոցով ապահովել վերջիններին վերաբերող խնդիրների համակողմանի և արդյունավետ լուծում՝ միջոցներ է ձեռնարկել հետևյալ ուղղություններով, որոնք 2022 թվականին ևս կրելու են շարունակական բնույթ.

- սպառողների հետ կապն ապահովելու նպատակով հանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով տրվում է օպերատիվ տեղեկություն սպառողներին հուզող հարցերի, ինչպես նաև խորհրդատվություն մատակարար-սպառող հարաբերություններում դիմումատուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ.
- հանրության առջև հանձնաժողովի հաշվետվողականության ապահովման շրջանակում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահի կողմից, նշանակված են սպառողների հետ հանդիպումների օրեր՝ սպառողներին հնարավորություն տալով բարձրացնել իրենց հուզող հարցերը և ստանալ պարզաբանումներ.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում գործում է www.e-request.am միասնական հարթակի միջոցով էլեկտրոնային դիմում ներկայացնելու հնարավորություն, որը միտված է դիմումների քննարկման գործընթացն առավել թափանցիկ և սպառողների կողմից վերահսկելի դարձնելուն և թույլ է տալիս նաև առցանց ռեժիմով հետևելու դիմումի քննարկման ընթացքին ու ստանալու առցանց պատասխան.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ներկայացված է սպառողների կողմից հաճախակի տրվող հնարավոր հարցերի և դրանց

պատասխանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, որոնք պարբերաբար թարմացվում են՝ համապատասխանեցվելով գործող կարգավորումներին.

- մինչև 2022 թվականի առաջին եռամսյակի ավարտը հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կիրապարակվի դիմումների քննարկման գործընթացի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը.
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից հանձնաժողով է ներկայացվում սպառողների դիմումների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվություն, որը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բաղադրիչ, քննարկվելուց հետո հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

4.2. Սպասարկման որակի ցուցանիշներ

Սպառողների կողմից բարձրացված խնդիրների շարքում իր կարևորությամբ առանձնանում է կարգավորվող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովումը: Նշված գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության առանցքում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության և հանձնաժողովի կողմից տեղում իրականացվող մոնիթորինգի, այնպես և սպառողների դիմում–բողոքների ուսումնասիրության միջոցով:

Մասնավորապես, հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների դիմում–բողոքների ուսումնասիրության հիման վրա մոնիթորինգի է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին, նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման համակարգին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացներում սահմանված ժամկետների խախտումները և դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի պահանջների խախտման դեպքում իրավախախտ տնտեսվարողների նկատմամբ կիրառվում են օրենքով սահմանված համաչափ տույժեր և պարտավորեցվում իրենց խախտած ցանկացած իրավունքի ամբողջական վերականգնում:

Նշվածը, սակայն, ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է ոլորտում արձանագրված թերությունների համակողմանի և խորքային վերլուծություն՝ վեր հանելով դրանց հիմքում ընկած իրական պատճառները և խորամուխ լինելով դրանց առավել արդյունավետ կարգավորմանն ուղղված լուծումների որոնումների մեջ: Նշված լուծումները դառնում են համապատասխան ծառայության մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման առարկա՝ մատակարար–սպառող հարաբերություններին վերաբերող կարգավորումները դարձնելով ժամանակի պահանջներին համահունչ:

Էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակումն ու կատարելագործումը կրում են շարունակական բնույթ, որն իրականացվելու է նաև 2022 թվականին:

Միաժամանակ, սպասարկման որակի վերահսկողությունն ապահովելու նպատակով հանձնաժողովը 2022 թվականի ընթացքում ևս կիրականացնի էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպասարկման որակի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություններ: Մասնավորապես, 2022 թվականի ընթացքում կիրականացվեն ուսումնասիրություններ՝

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող՝ նոր միացման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության վերաբերյալ,
- «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող՝ բաժանորդներին վճարված տուժանքների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության վերաբերյալ:

Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային արդյունքներով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սպասարկման որակի վերահսկողությանն ուղղված աշխատանքներն ունեն շարունակական բնույթ և կիրականացվեն նաև 2022 թվականի ընթացքում:

5. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը

Համաձայն գործող օրենսդրության՝ հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը՝ զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի և այլ միջոցներով: Այս ուղղությամբ հանձնաժողովի ձեռնարկած քայլերը կրում են հետևողական բնույթ և միտված են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ տեղեկատվության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության բարձրացմանը: Մասնավորապես,

- Հանձնաժողովը, որպես կոլեգիալ ինքնավար մարմին, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ

դոնբաց նիստերի միջոցով: Այդ առումով, հանձնաժողովը, իր սահմանած կարգի համաձայն, հայտարարում է նիստերի անցկացման վայրը, օրը, ժամը և հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հանրության ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին՝ իր վարչական շենքի հնարավորությունների սահմաններում, ստանալու օրակարգ և քննարկվող նյութերը, ներկայացնելու տեղեկություններ և հանդես գալու ելույթներով: Սպառողների համար սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր նիստում քննարկվելու դեպքում հանձնաժողովը ողջամիտ ժամկետում այդ մասին իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնին և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին, հանդես գալու ելույթներով և առաջարկություններով: Նիստերի կազմակերպման և անցկացման վերաբերյալ կանոնակարգումների բարեփոխումները մշտապես հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են:

- Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկայիս տեմպերը հնարավորություն են տալիս նորարարական լուծումներ կիրառել նաև հանձնաժողովի նիստերի անցկացման գործընթացում: Մասնավորապես, հանձնաժողովի անդամների և շահագրգիռ անձանց համար ստեղծված է հնարավորություն՝ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստին մասնակցելու տեսաձայնային հեռահաղորդակցության կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:
- Շարունակական բնույթ են կրում նաև հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի արդիականացման աշխատանքները, որի նպատակն է ներդնել ավելի արագ և հարմարավետ կառավարման համակարգ՝ դարձնելով կայքը ժամանակին համընթաց, անվտանգ և ապահովել ընդհանուր որոնման ժամանակակից գործիքներից և սմարթ հեռախոսներից կայքի պատշաճ դիտելիություն: Հանձնաժողովի կայքը պարունակում է

տեղեկություններ ինչպես հանձնաժողովի գործող որոշումների, այնպես և քննարկվող նախագծերի, կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող սակագների հայտերի, վերջիններիս գործունեության տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշների, կարգավորման ոլորտին առնչվող նորությունների և հաղորդագրությունների, հանձնաժողովի հետ կապի միջոցների և այլնի մասին: Հանձնաժողովի պաշտոնական կայքը կարևոր է ինչպես սպառողների, այնպես և ներդրողների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների և հանձնաժողովի գործընկեր կազմակերպությունների համար: Այդ նկատառումով՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի ծրագրի աջակցությամբ ներկայում ընթացքի մեջ են հանձնաժողովի նոր ինտերնետային կայքի ամբողջական մշակման աշխատանքները: Հանձնաժողովի նոր կայքի անհրաժեշտությունն առավել կարևորվում է հատկապես էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաներում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում, և էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջական նոր մոդելին անցման պարագայում հանձնաժողովի նոր կայքի ժամանակակից լուծումներով հագեցված լինելն էլ ավելի կնպաստի անհրաժեշտ տեղեկատվության արդյունավետ և համակողմանի ներկայացմանը:

Հանձնաժողովի կայքը հնարավորություն է ընձեռում հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերություններին պաշտոնական ինտերնետային կայքում գործող առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային հարթակի միջոցով համապատասխան հաշվետվությունները և տեղեկատվությունը հանձնաժողով ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ առանց վարչական մարմին այցելելու: Բացի այդ, կայքում գործում է «www.e-request.am» էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը, ինչը հնարավորություն է տալիս քաղաքացիներին առցանց եղանակով ներկայացնել դիմում, հարցում կամ բողոք և նույնպես առցանց ստանալ պատասխանը:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը պարբերաբար թարմացվում է՝ հնարավորություն ընձեռելով զանգվածային լրատվամիջոցներին,

սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի իրազեկվել հանձնաժողովի գործունեության, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ներկա գործընթացների, ծառայությունների սպասարկման որակի, մատակարար-սպառող փոխհարաբերությունների և այլնի մասին:

Հանձնաժողովի հաղորդակցության գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվել են նաև հարթակներ սոցիալական ցանցերում, որոնց միջոցով սպառողների հետ շփումները կկրեն ավելի ինտերակտիվ և օպերատիվ բնույթ:

Կարևորելով հանրային իրազեկման մակարդակի բարձրացումը և այդ աշխատանքներում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների դերը՝ հանձնաժողովը 2022 թվականին կշարունակի հանրային հնչեղություն ունեցող, մասնավորապես, սակագների ձևավորմանը, փոփոխությանը և սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի շուրջ սերտ համագործակցությունը ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ:

Հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու օրենքի պահանջը, ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2022 թվականին, հանձնաժողովը կհրապարակի նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

2022 թվականին հանձնաժողովի անդամները և մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

6. Միջազգային համագործակցություն

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով

հանձնաժողովը համագործակցում է Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), Սևծովյան տարածաշրջանային կարգավորման նախաձեռնության (BSRI), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), ԵՄ համապատասխան կազմակերպությունների, մասնավորապես՝ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg), Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG), Էներգետիկ համայնքի (Energy Community) հետ: Նշված կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ տարբեր երկրների կարգավորողների համար էներգետիկ շուկաների ազատականացման, բաշխման և հաղորդման ցանցերի ցանցային կոդեքսների մշակման, ցանցերի հուսալիության և անվտանգության, ներառյալ՝ կիբերանվտանգության, վերականգնվող ռեսուրսներից էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման, ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կարգավորման քաղաքականության վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս հանձնաժողովին ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և ստանալ համապատասխան տեղեկատվություն:

Հանձնաժողովը, հանդիսանալով Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg) և Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) անդամ, մասնակցում է նշված կազմակերպությունների տարեկան ընդհանուր ժողովներին, ինչպես նաև վերջիններիս կողմից ստեղծված համապատասխան կոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին:

Հատկանշական է, որ հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտում հանձնաժողովի կողմից իրականացվող կարգավորումը՝ Հեռահաղորդակցության

միջազգային միության (ITU) կողմից հրապարակված G5 Benchmark փորձագիտական հաշվետվությունում Հայաստանի Հանրապետությունը, որպես հեռահաղորդակցության ոլորտի 5-րդ սերնդի համագործակցային և թիրախային կարգավորում իրականացնող, ԱՊՀ տարածաշրջանում ստացել է ամենաբարձր գնահատականը:

Այս համատեքստում, միջազգային հարթակներում հանձնաժողովի ակտիվ ներգրավվածությամբ և արդյունավետ գործունեությամբ պայմանավորված, 2021 թվականի հուլիսի 22-ին կայացած ԵՄ Արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության կարգավորողների ցանցի (EaPeReg) լիագումար ժողովի ընթացքում հանձնաժողովն առաջադրվել է EaPeReg ցանցի 2022 թվականի նախագահողի պաշտոնում, որի կապակցությամբ 2022 թվականի ընթացքում կազմակերպելու և իրականացնելու է EaPeReg ցանցի նախագահության շրջանակում նախատեսվող աշխատանքները:

2021 թվականի ընթացքում ԵՄ Արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբի շրջանակում հանձնաժողովը մասնակցում է Համաշխարհային բանկի հետ համատեղ մշակվող լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման ռազմավարությանը, ենթակառուցվածքների քարտեզագրման համակարգի, միասնական տեղեկատվական կենտրոնի ստեղծմանը և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի օրենսդրական բարեփոխումների ներդրմանն ուղղված աշխատանքներին, որոնք կշարունակվեն նաև 2022 թվականին:

2022 թվականի ընթացքում ԵՄ արևելյան գործընկերության երկրների հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբի շրջանակում շարունակվելու են նաև կարգավորող մարմինների անկախության ամրապնդմանը և էլեկտրոնային հաղորդակցության շուկաների սահմանմանն ու վերլուծությանն ուղղված աշխատանքները:

Բացի այդ, ԵՄ ԱլԳ երկրների հեռահաղորդակցության կարգավորողների ցանցում գործող ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի շրջանակում հանձնաժողովը մասնակցում է նշված տարածաշրջանում միջազգային ռոումինգի միասնական տարածք ձևավորելուն և միջազգային ռոումինգ ծառայության սակագների նվազեցմանն ուղղված աշխատանքներին, որոնք նախատեսվում է շարունակել նաև 2022 թվականի ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը 2022 թվականին նախատեսում է նշված աշխատանքային խմբի շրջանակում մասնակցել ԵՄ ԱլԳ երկրների և ԵՄ երկրների միջև միջազգային ռոումինգի միասնական տարածք ձևավորելու հնարավորությունն ուսումնասիրելու աշխատանքներին:

Միևնույն ժամանակ, ԵՄ ԱլԳ երկրների հեռահաղորդակցության կարգավորողների ցանցում ռադիոհաճախականությունների հարցերով աշխատանքային խմբի շրջանակում հանձնաժողովը շարունակելու է աշխատել ռադիոհաճախականությունների տիրույթի տարածաշրջանային համաձայնագրի ստորագրման և հետագա կիրարկման ուղղությամբ:

2022 թվականի ընթացքում կշարունակվեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համակարգմամբ գործող միջազգային աշխատանքային խմբի շրջանակում միջազգային ռոումինգ ծառայությունների արդար սակագների ներդրման համար անհրաժեշտ պայմանների ձևավորմանն ուղղված աշխատանքները: Այս առնչությամբ, հանձնաժողովը շարունակելու է նաև աշխատանքները Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում միջազգային տրաֆիկի փոխանցումների ժամանակ խարդախությունների կանխարգելման հարցերով աշխատանքային ենթախմբի շրջանակում: Բացի այդ, հանձնաժողովը համագործակցելու է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակում տրաֆիկի փոխանցման ծառայությունների գնագոյացման միասնական մոտեցումների սահմանման հարցում:

Ելնելով հեռահաղորդակցության բնագավառում կարգավորող մարմինների հետ համագործակցության ընդլայնման, կարգավորման ենթակա ոլորտներում փորձի փոխանակման նկատառումներից, ինչպես նաև հաշվի առնելով Չեխիայի հեռահաղորդակցության գրասենյակի (CTU), Լատվիայի հանրային ծառայությունների հանձնաժողովի (PUC) և Լեհաստանի էլեկտրոնային հաղորդակցության գրասենյակի (UKE) հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրերը՝ հանձնաժողովը շարունակելու է վերջիններիս հետ համագործակցությունը: Միևնույն ժամանակ, շարունակվում են համատեղ քննարկումները Ռումինիայի հեռահաղորդակցության կառավարման և կարգավորման ազգային մարմնի (ANCOM) հետ՝ երկարաժամկետ կանոնավոր

համագործակցություն ծավալելու, համագործակցության ուղղություններն ու կազմակերպական առանձնահատկությունները սահմանելու համար:

2022 թվականին կշարունակվի համագործակցությունը Վրաստանի Էներգետիկայի կարգավորման ազգային հանձնաժողովի, Ուկրաինայի հեռահաղորդակցության և տեղեկատվայնության պետական կարգավորման ազգային հանձնաժողովի, Չեխիայի հեռահաղորդակցության հանձնաժողովի, Լատվիայի հանրային ծառայությունների հանձնաժողովի, Լեհաստանի էլեկտրոնային հաղորդակցության գրասենյակի հետ՝ կնքված Փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում:

Հանձնաժողովն իրեն վերապահված իրավասությունների շրջանակում պետական այլ մարմինների հետ համատեղ մասնակցելու է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կիրարկման միջոցառումների ծրագրով նախատեսված, ինչպես նաև Եվրոպայի էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) կողմից կազմակերպվող աշխատանքներին՝ «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» EU4Energy-ի ծրագրի շրջանակում:

Հանձնաժողովը, հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին արձանագրության» (պայմանագրի հավելված 20) շրջանակում նախատեսված աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված մարմին, շարունակելու է մասնակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բնական մենաշնորհների գծով Խորհրդատվական կոմիտեի աշխատանքներին:

Համագործակցելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ՝ հանձնաժողովը կշարունակի համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան կառույցների հետ՝ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

2022 թվականին կշարունակվի արդյունավետ համագործակցությունը նաև Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ՝ համապատասխան օրենքների և կանոնների նախագծերի մշակման, լրամշակման, ոլորտների մասնագետների փորձի փոխանակման և այլ միջոցառումներին մասնակցության շրջանակում՝ ըստ կարգավորվող ոլորտների և գործառույթների:

7. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովում և 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվ

2022 թվականին հանձնաժողովի վերահսկողության ներքո կգտնվի կարգավորվող ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքերի ապահովման գործընթացը՝ լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, կարգավորվող ոլորտներում հանձնաժողովի կողմից կիրառվող տուգանքների, ինչպես նաև կայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների մասով:

Ըստ կանխատեսումների՝ 2022 թվականին նշված աղբյուրներից պետական բյուջե կփոխանցվի շուրջ 9.3 մլրդ դրամ, որից ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը կկազմեն շուրջ 8.1 մլրդ դրամ:

Հանձնաժողովի 2022 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն ձևավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:

Հանձնաժողովի 2022 թվականի տարեկան բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվել է հանրային քննարկում, որի մասին տեղեկատվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Քննարկման մասնակիցներին ներկայացվել է հանձնաժողովի բյուջեի ձևավորման մեխանիզմը,

ինչպես նաև պարզաբանվել են բյուջետային հայտի նախագծի հիմքում դրված ծախսային հաշվարկ-հիմնավորումները:

8. Հանձնաժողովի 2022 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը

Հանձնաժողովի 2022 թվականի գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու և ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով այն հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև համապատասխան գրություններով ուղարկվել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերություններին և սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին: Ներկայացված առաջարկությունները կամ ներառվել են ծրագրում, կամ տրվել են համապատասխան պարզաբանումներ:

Հանձնաժողովի 2022 թվականի գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքները կներառվեն 2022 թվականի աշխատանքային ծրագրում, որը կհաստատվի 2021 թվականի տարեվերջին և կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: